16.07.2015թ

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի

2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվություն

Արձանագրություն

2015 թվականի հուլիսի 16-ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը :

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի փոխմարզպետ՝ Դավիթ Սամսոնյանը , Խորոնք համայնքի ավագանու անդամներ՝ Նշան Ասատրյանը , Նորիկ Կարապետյանը , Էդգար Խաչատրյանը , Արթուր Մամիկոնյանը, Գրիգոր Թադևոսյանը և Խորոնք համայնքի 80 բնակիչներ:

Խորոնք համայնքի ղեկավար Սարգիս Նահապետյանը մանրամասնորեն զեկուցեց 2015 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը: Խորոնք համայնքի ավագանու անդամները և բնակիչները գոհ էին ղեկավարի կատարած աշխատանքներից , և հավելեցին, որ ցանկացած հարցում պատրաստ են աջակցել գյուղապետին՝ համայնքի հիմնախնդիրների լուծման հարցերում:

Ավագանու անդամ Նորիկ Կարապետյանը հարց բարձրացրեց մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի բարեկարգման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Ս. Նահապետյանը պատասխանեց ավագանու անդամ Նորիկ Կարապետյանի հարցին և ասաց, որ գյուղապետարանը համապատասխան ծրագրեր է մշակում այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Ավագանու անդամ Ա.Մամիկոնյանը նշեց , որ միջնակարգ դպրոցը սպորտդահլիճի կարիք ունի: Փոխմարզպետը պատասխանեց, որ այդ հարցը կբարձրացնի Արմավիրի մարզպետարանում, եթե առաջիկայում այդպիսի ծրագիր նախատեսվի, համայնքն անպայման կընգրկվի ծրագրում:

Բնակիչների կողմից հարց առաջադրվեց այն մասին , որ գյուղամիջյան փողոցները բարեկարգման կարիք ունեն, կան ճանապարհներ, որոնք անձրևոտ եղանակին անանցանելի են դառնում, համայնքի ղեկավարը պատասխանեց , հնարավորության սահմաններում հետամուտ կլինի այդ խնդրի լուծմանը:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

Արձանագրությունը կազմեց Խորոնքի գյուղապետարանի քարտուղարի ժ/պ՝ /Վ. Կարապետյան/

16.07.2015թ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն

Գործավարություն

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 52 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:

Համայնքի բնակիչներին տրամադրվել են 260 տեղեկանքներ և բնութագրեր:

Ուղարկվել են 68 պաշտոնական գրություններ մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 32 որոշում և արձակվել է 5 կարգադրություն:

Ավագանու գործունեություն

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 1 արտահերթ և 3 հերթական նիստ: Արտահերթ նիստը հրավիրվել է համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Մասնավորապես կատարվել են բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

Գյուղատնտեսական ոլորտ

Գյուղապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Տարվա ընթացքում հանայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- բնակավայրային նշանակության հողեր՝ 142 հա
- վարելահողեր՝372 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.35 հա

Գյուղացիական տնտեսություններին տարվա ընթացքում տրամադրվել է 80 տոննա ազոտական, 0.75 տոննա ֆոսֆորական և 0.85 տոննա կալիումական պարարտանյութ:

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում արտադրվել է և հանրապետության շուկաներ են հանվել 34500 ցենտներ բանջարեղեն և շուրջ 100 ցենտներ ձմերուկ:

Անասունների գլխաքանակը 01.07.2015 թվականի դրությամբ

Խոշոր եղջերավոր անասուններ՝ 266 գլուխ, որից՝ կովեր՝ 94 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 80 գլուխ, որից մայրականը՝ 62 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 150 գլուխ., որից մայրական կազմը՝ 37, մեղվաընտանիքներ՝ թվով 25:

Քաղաքաշինության բնագավառ

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինության ոլորտում:

Վերանորոգվել է գերեզմանատան ջրագիծը, որի համար տրամադրվել է 130.000 դրամ գումար:

Հողաշինություն և հողօգտագործման բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

Կատարվել են հողերի չափագրման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է նաև շուրջ 9 հա հողատարածքի վարձակալության հանձման գործընթացը:

Ջրամատակարարման բնագավառ

Գյուղապետարանը 30.000.0 հազ. (երեսուն միլիոն) դրամ գումար է հատկացրել՝ համայնքի տնամերձների ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներն իրականացնելու նպատակով: Կազմվել է նախագիծ-նախահաշվարկ, տեղի է ունեցել գնման գործընթացի կազմակերպման մրցույթ, որի ընթացքում հաղթող ճանաչված մասնակցին իրավունք է վերապահվել իրականացնելու համապատասխան աշխատանքները:

ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը նախնական 7000.0 մլն. դրամ գումար է տրամադրել վերոհիշյալ աշխատանքներն իրականացնելու համար:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ հետ համագործակցության շնորհիվ կյանքի է կոչվել համայնքը խմելու ջրով ապահովելու ծրագիրը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Մարզպետի աջակցությամբ վերանորոգվել է մայրուղու ասֆալտապատ ճանապարհը:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով հարթեցվել են Խորոնք-Գրիբոյեդով մայրուղու մայթեզրի, ինչպես նաև դեպի Զաքիր և Ադաներ տանող ճանապարհները: Հարթեցման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 200.000 դրամ գումար:

Աղբահանության բնագավառ

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար հատկացվել է 780.000 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ:

Մշակույթի և սպորտի բնագավառ

Գործում է ըմբշամարտի խմբակ: Գյուղապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում:

300000 դրամ գումար հատկացվել է Խորոնքի գյուղապետարանի , «Խորոնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության 20 աշխատակցուհիներին կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ նվերներ գնելու համար:

Վերջին դասի կապակցությամբ հատկացվել է 200000 դրամ գումար և այդ գումարով շրջանավարտներին գնվել են նվերներ:

Մայիսի 9-ի՝ Հաղթանակի տոնի կապակցությամբ հյուրասիրություն կազմակերպելու համար տրամադրվել է 250000 դրամ գումար: Հյուրասիրությանը մասնակցել են պատերազմի վետերանները,

գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների աշխատակիցները և համայնքի բնակիչները:

Մեծ Եղեռնի 100-ամյակին նվիրված խաչքարի պատրաստման և տեղադրման աշխատանքներն իրականացնելու համար տրամադրվել է 1.198.000 դրամ գումար: Խաչքարի բացման հանդիսավոր արարողության և այդ նպատակով միջոցառման համար հատկացվել է 200000 դրամ գումար:

Սշակույթի տան շենքի տարածքը բարեկարգելու նպատակով 170.000 դրամ գումար տրամադրվել է ջրհոր հորատելու համար, 100.000 դրամ հատկացվել է ջրային պոմպ և անհրաժեշտ սարքավորումներ գնելու, մրգատու ծառերի տնկիներ գնելու նպատակով հատկացվել է 150.000 դրամ գումար:

Սոցիալական բնագավառ

Գյուղապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել հայրենական մեծ պատերազմի վետերանները , արցախյան հերոսամարտի մասնակիցները, նպաստառուները և կենսաթոշակառուները:

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում 950.000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել , այդ թվում՝ հիվանդ և սոցիալապես անապահով՝ 21, նորածին երեխաներ ունեցող՝ 12 և Հայրենական պատերազմի վետերանների՝ 1 ընտանիքների:

Հողի հարկ և գույքահարկ

2015 թվականի հունիսի վերջի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 1659.8.2 դրամ հողի հարկ, որը կազմում է կիսամյակի կտրվածքով բյուջեով նախատեսված հողի հարկի 127.6%: Կիսամյակի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 1043.4 (94.8%) դրամ գումար, որից՝ փոխադրամիջոցների գույքահարկ՝ 1041.3 դրամ գումար (104.1%), շինությունների գույքահարկ՝ 21 դրամ գումար (2.1%):

Վարձակալական հողերի վարձը 2015 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով կազմել է 319.1 (70.9%) դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 10.6 (21.2%) դրամ գումար:

Բյուջեի ծախսերը

Խորոնքի գյուղապետարանը 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարել է հետևյալ բյուջետային ծախսերը.

1. Աշխատավարձ-11094.4 դրամ գումար
2. Էներգետիկ ծառայություն և գազ-583.0դրամ գումար
3. Կապի ծառայություն – 93.0 դրամ գումար
4. Ապահովագրական ծախսեր-72.0 դրամ գումար
5. Համակարգչային ծառայություն- 78.2 դրամ գումար
6. Տեղեկատվական ծառայություն- 34.1 դրամ գումար
7. Ներկայացուցչական ծախսեր-700.0 դրամ գումար
8. Ընդհանուր բնույթի ծառայություններ- 570.0 դրամ գումար
   որից՝ 1.ծաղկեպսակ-120.0 դրամ գումար
   2.այլ բնույթի ծախսեր-450.0 դրամ գումար
9. Հատուկ նպատակային նյութեր-150.0 դրամ գումար
10. Մասնագիտական ծառայություն-150.0 դրամ գումար
11. Գրասենյակային նյութեր-100.0 դրամ գումար
12. Տրանսպորտային նյութեր-475.0 դրամ գումար
13. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն -1168.0 դրամ գումար
    որից՝ 1. խաչքարի պատրաստում և տեղադրում-998.0 դրամ գումար
    2.ջրհորի հորատում-170.0 դրամ գումար
14. Ճանապարհների նորոգում- 200.0 դրամ գումար
15. Աղբահանում- 780.0 դրամ գումար
16. Ջրամատակարարում- 780.0 դրամ գումար
17. «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատավարձ- 3439.8 դրամ գումար
18. Նախադպրոցական ուսուցում 4180.0դրամ գումար
19. Սոցանապահովներ-950.0դրամ գումար

Ազգաբնակչություն

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2929 մարդ: 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ծնվել է 14 և մահացել է 7 մարդ:

Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 38 մարդ , թոշակառուները 255 մարդ:

Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 304 աշակերտ և գործում է մանկապարտեզ՝ 65 երեխայի հաճախումով և 14 աշխատակցով:

Համայնքի հիմնախնդիրներ

ա. համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան փողոցների հարթեցումը և խճապատումը.

բ. վերանորոգման կարիք ունեն համայնքի մանկապարտեզի և մշակույթի տան շենքերը.

գ. դպրոցում բացակայում է սպորտդահլիճը, որն իր բացասական հետևանքներն է թողնում համայնքի երեխաների ֆիզիկական պատրաստվածության զարգացման վրա.

դ. երեխաների համար խաղահրապարակի կառուցումը.

ե. փողոցային առևտուրը կանխելու նպատակով բանջարեղենի վաճառքի համապատասխան կենտրոնի ստեղծումը:

Խորոնք համայնքի ղեկավար /Ս. Նահապետյան/